



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՐԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Երեքշաբթի, 21 Օգոստոսին Ազգային Առաջնորդարան այցելեց Ազգային Բարերար Րաֆֆի Մանուկեան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Հիւր բարերարին կ'ընկերանար իր տնտեսական հարցերու խորհրդատու Տիար Սարգիս Տէրտերեան:

Առաջնորդ Սրբազանին կողքին, ներկայ էին Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Թեմիս Կրօնական Ժողովի փոխ ատենապետ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, ատենադպիր Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան, Վարչութեան անդամներ, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի ատենապետ Տիար Աւօ Քէշիշեան եւ Ազգ. Առաջնորդարանի հովանիին ներքեւ գործող յանձնախումբերու անդամներ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հիւր բարերարը եւ յետ ներկաներուն հետ ծանօթացման՝ տեղեկութիւններ փոխանցեց Ազգային Առաջնորդարանի յարկին տակ տարուող եկեղեցական, ազգային եւ կրթական աշխատանքներուն մասին:

Տիար Րաֆֆի Մանուկեան գոհունակութեամբ արտայայտուեցաւ թեմական աշխատանքներու զարգացման ու արձանագրուած իրագործումներուն մասին, շնորհաւորեց նորակառոյց շէնքը եւ իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Ազգ. Առաջնորդարանի եկեղեցաշէն ու կրթանուէր աշխատանքներուն ու հեռանկարներուն:

BENEFACTOR MR. RAFFI MANOUKIAN VISITS THE PRELACY

On Tuesday morning, August 21st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed benefactor Mr. Raffi Manoukian to the Prelacy. Mr. Manoukian was accompanied by his financial advisor Mr. Sarkis Derderian.

Participating in the meeting were Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious Council Vice-Chair Very Rev. Fr. Barthev Gulumian, Religious Council Secretary Rev. Vazken Atmajian, Executive Council Chair Dr. Garo Agopian and council members, Board of Regents Chair Mr. Avo

Kechichian, and representatives of various committees serving under the Prelacy.

During their meeting the Prelate informed Mr. Manoukian of the various endeavors carried out at the Prelacy. Mr. Manoukian expressed his appreciation for the work being accomplished at the Prelacy, congratulated the Prelate on the actualization of the new headquarters, and reaffirmed his ongoing support of the Prelacy's projects and mission.